**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՀՄԱ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 19.04.2019թ.
ժամը 16[30]

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
**Գնահատողներ՝**
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի ՊԾ պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Գևորգյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ.Գևորգյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Գ.Գևորգյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | ԱՁ Ալեքսանդր Յարովենկո |
| 2 | «ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻ» ԲԲԸ |
| 3 | «Էկո Ֆուդ» ՍՊԸ |
| 4 | «Մաստերֆուդ» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

---

(Գ.Գևորգյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվում տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, բացառությամբ «ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻ» ԲԲԸ-ի, ԱՁ Ալեքսանդր Յարովենկոյի և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝
«ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը (Հավելված 4) հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ, հետևաբար գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը, «ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԻ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը մերժել է;
ԱՁ Ալեքսանդր Յարովենկոյի կողմից ներկայացրած Հավելված 2.1-ում նշված չեն մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
«Մաստերֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 3.1-ում նշված է «Խեկ կամ Իշխան»: Անհրաժեշտ է կամ հստակեցնել առաջարկվող ձկան տեսակը, կամ տարբեր տեսակի ձուկ առաջարկելու դեպքում հստակեցնել դրանց քանակները (տոկոսային հարաբերակցությամբ):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և 22.04.2019թ. ԱՁ Ալեքսանդր Յարովենկոյին և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Մաստերֆուդ» ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունը, իսկ ԱՁ Ալեքսանդր Յարովենկոն չի շտկել անհամապատասխանությունը, ուստի 25.04.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մերժել է ԱՁ Ալեքսանդր Յարովենկոյի ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Գ.Գևորգյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքին և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակը | Նախահաշվային գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | Ընդհանուր | | առանց ԱԱՀ | Ընդհանուր |
| 1 | մակարոն /Մակարոն/ | կգ | 40000 | 10800000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 2 | ցորենաձավար /Ցորենաձավար/ | կգ | 10000 | 1800000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 3 | ձուկ՝ սառեցրած /Ձուկ սառեցրած ա/գ/ | կգ | 60000 | 84000000 | «Մաստերֆուդ» ՍՊԸ | 66950000 | 80340000 | «Մաստերֆուդ» ՍՊԸ | 66950000 | 80340000 |
| | | | | | «Էկո Ֆուդ» ՍՊԸ | 102500000 | 123000000 | | | |
| 4 | տավարի միս ոսկրոտ /Տավարի միս/ | կգ | 120000 | 209760000 | ԱՁ Ալեքսանդր Յարովենկո | 162900000 | 195480000 | Բանակցություն | | |
| | | | | | «Մաստերֆուդ» ՍՊԸ | 171900000 | 206280000 | | | |
| 5 | մածուն /Մածուն/ | կգ | 37500 | 13125000 | Չհամապատասխանող հայտ | | | | | |
| 6 | թթվասեր /Թթվասեր/ | կգ | 5120 | 6400000 | Չհամապատասխանող հայտ | | | | | |
| 7 | կաթնաշոռ դասական /Կաթնաշոռ/ | կգ | 5120 | 10240000 | Չհամապատասխանող հայտ | | | | | |
| 8 | քացախ /Քացախ/ | կգ | 200 | 57800 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 9 | համեմունքներ /Պղպեղ կարմիր/ | կգ | 200 | 440000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 10 | չամիչ /Չամիչ/ | կգ | 471 | 574620 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ, ուստի, 25.04.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, գների նվազեցման նպատակով «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի հետ վարվել են բանակցություններ: Ի գիտություն՝ «Մաստերֆուդ» ՍՊԸ տնօրենը ներկա է գտնվել նիստին: Բանակցությունների արդյունքում «Մաստերֆուդ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկը թողել է անփոփոխ:

3.4 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգը 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ.Գևորգյան)

4.1 25.04.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին:

4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ.Գևորգյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ.Գևորգյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից հարցման պատասխանը ստացվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Ա. Մարգարյան |
| **Գնահատող** | Ս. Պետրոսյան |
| **Գնահատող** | Ա. Կարապետյան |
| **Գնումները համակարգող** | Գ. Գևորգյան |